ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՎՐԱ

ՄԻՔԱՅԵԼ ԹԱՎԱԴՅԱՆ

«ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղություններում», որոնք քննարկվել և հաստատվել են ՍՄԿԿ XXVI համագումարում՝ որպես ծրագրային փաստաթուղթ, խնդիր է դրվում «Հասնել տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների հետ գիտատեխնիկական նվաճումների օրգանական միասնությանը։ Բարձրացնել գիտության դերը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և սոցիալական հրատապ պրոբլեմների լուծման գործում...»[1]։ Բարձր արդյունավետ ժողովրդական տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ է իրականացնել գիտատեխնիկական առաջադիմության, սոցիալիստական ընդլայնված վերարտադրության և հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանման փոխկապակցությունների կոմպլեքսային ուսումնասիրություն։ ՍՄԿԿ XXVI համագումարում ընդգծվեց, որ անհրաժեշտ է «Ապահովել հասարակության հետագա տնտեսական առաջադիմություն, նյութատեխնիկական բազայի որակական խոր տեղաշարժեր՝ գիտատեխնիկական առաջադիմության արագացման, հանրային արտադրության ինտենսիվացման, նրա արդյունավետության բարձրացման հիման վրա։ Իրականացնել ՍՍՀՄ էկոնոմիկայի՝ որպես միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի, դինամիկ և հաշվեկշռված զարգացումը, նրա բոլոր ճյուղերի և միութենական հանրապետությունների տնտեսության համամասնական աճը»[2]։ Նշված պրոբլեմների լուծումը կանխորոշված է մարքսիզմ-լենինիզմի կողմից։ Ընդլայնված սոցիալիստական վերարտադրության ինտենսիվ աճը մեծ չափով կախված է աշխատանքի տերիտորիալ բաժանման զարգացումից ու խորացումից, միութենական հանրապետություններում և տնտեսական շրջաններում դինամիկ ճյուղային կառուցվածքի ստեղծումից և ռացիոնալ միջռեգիոնալ տնտեսական կապերի զարգացումից։ Հասարակական արտադրության ինտենսիվ զարգացումն անխուսափելիորեն հանգեցնում է տերիտորիալ համակենտրոնացման հետագա աճի և արտադրության տարբերակման, որոնք, Կ. Մարքսի խոսքերով ասած, արտադրության արդյունավետության աճի համընդհանուր պայման են և մեքենաշինական արտադրու-

---

1 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 222։

2 Նույն տեղում, էջ 221։

թյան զարգացման կարևոր նախապայման[3]։ Վերջինս, իր հերթին, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ոլորտում առաջ է բերում հեղափոխություն։

Հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանման և նրա կառավարման մեխանիզմի զարգացմանը համապատասխան, լայն հնարավորություններ են առաջանում տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների հետ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների առավել անմիջական զուգակցման համար։ Գիտության, տեխնիկայի և արտադրության միջև հարաբերությունները սոցիալիզմի պայմաններում կանխորոշվում են նրանով, որ աշխատանքի հասարակական բաժանումը խորանում է ինչպես գիտության ու արտադրության ներսում, այնպես էլ դրանց միջև։ Բանն այն է, որ արտադրության և նրա տեխնոլոգիայի վրա գիտության նվաճումների ազդեցությունը ներկա պայմաններում ընդունում է առավել ուղղակի բնույթ և դրանց մեջ առաջ է բերում արմատական փոփոխություններ։ Գիտության ուղղակի ազդեցությունն արտադրության կատարելագործման վրա ինքնըստինքյան արդեն գիտական հետազոտությունների հետագա զարգացում է։ Այսինքն, ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում հաստատվում է Կ. Մարքսի այն միտքը, որ «Եթե արտադրության պրոցեսը գործում է գիտության օգտագործման շնորհիվ, ապա գիտությունը, ընդհակառակը, դառնում է գործոն, այսպես ասած արտադրության պրոցեսի ֆունկցիա»[4]։

Գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա սոցիալիստական էկոնոմիկայի նպատակի իրականացումը կախված է հասարակական արտադրության կառուցվածքի մշտական կատարելագործումից, աշխատանքի հասարակական բաժանումից։ Հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանման նպատակը վերջին հաշվով արտահայտվում է աշխատաժամանակի տնտեսման մեջ։ Այդ պատճառով էլ հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանման և արտադրության տեղաբաշխման ռացիոնալացման մասին դրույթները, կապված նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման հետ, ժողովրդական տնտեսության համար պրակտիկ նշանակություն կունենան այն դեպքում, եթե հանգեցնում են միավոր արտադրանքի հաշվով հասարակական աշխատանքի համախառն ծախսերի իջեցմանը։ Այսինքն, գիտատեխնիկական առաջադիմությունն աննպատակ չի գործում, այլ հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր միջոց է։ Կ. Մարքսն ընդգծել է, որ «Ինչպես առանձին անհատի համար, այնպես էլ հասարակության համար նրա զարգացման, պահանջների և գործունեության համակողմանիությունը կախված է ժամանակի տնտեսումից։ Ցանկացած տնտեսում վերջին հաշվով հանգեցնում է ժամանակի տնտեսմանը»[5]։ Սոցիալիզմի պայմաններում ծախսերի տնտեսումը, հասարակական արտադրության կառուցվածքի բարելավումը և աշխատանքի բաժանումը սերտ փոխկապակցության մեջ են գտնվում։ Գիտատեխնիկական առաջընթացը ձևավորում է նոր պահանջներ և միաժամանակ ստեղծում է միջոցներ՝ դրանց մասսայական իրացման ու գոյություն ունեցող պահանջների առավել լրիվ բավարարման հա-

---

3 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 654։
4 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 47, с. 553.
5 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, с. 117.

մար։ Այդ ձեռք է բերվում նոր, առաջին անգամ յուրացվող արտադրանքի մշակմամբ, ստեղծմամբ և լայն օգտագործմամբ։

Անհրաժեշտ է ընդգծել, որ գիտատեխնիկական առաջընթացն ընդգրկում է արտադրության բոլոր ճյուղերն ու պրոցեսները։ Սակայն արտադրության առանձին պրոցեսների և ճյուղերի վրա նրա ազդեցությունը միատիպ չէ, այլ կախված է դրանց տեխնոլոգիական և տեխնիկական առանձնահատկություններից։ Այդ պատճառով էլ գիտատեխնիկական առաջընթացի կապերի ընդհանուր համալիրից պետք է առանձնացնել այն կապերը, որոնք ուղղակիորեն ազդում են արտադրողական ուժերի մակարդակի և տեղաբաշխման զարգացման վրա։ Խիստ բազմաբովանդակ է գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունն արտադրողական ուժերի զարգացման ու տեղաբաշխման արդյունավետության վրա՝ կապված աշխատանքի գործիքների, արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հետ։

Սոցիալիստական հասարակարգում, արտադրության միջոցների հասարակական սեփականության շնորհիվ, գիտատեխնիկական հեղափոխությունը դառնում է կառավարվող պրոցես։ Դա հնարավորություն է տալիս ընտրել գիտության և տեխնիկայի զարգացման ուղղությունները՝ ելնելով երկրի տնտեսական առանձին շրջանների ժողովրդական տնտեսության շահերից (օրինակ, ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի ստեղծումը Սիբիրի և Հեռավոր արևելքի շրջանների համար) և դրանով իսկ ստեղծում է բարենպաստ պայմաններ ու նախադրյալներ՝ այդ շրջանների արագ և արդյունավետ զարգացման համար։

Նյութական արտադրության և երկրի տերիտորիայում նրա տեղաբաշխման առաջադիմական փոփոխությունները նշանակալից չափով կապված են մեքենաշինության, որպես արդյունաբերության առաջատար ճյուղի, զարգացման հետ։ Մեքենաշինությունը ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման հիմքն է, քանի որ ցանկացած գիտական նոր միտք կամ արտադրության տեխնոլոգիա չի կարող իրականացվել առանց համապատասխան սարքավորումների օգտագործման։ Վերջին տարիներին մեքենաշինական արդյունաբերության մեջ տեղի են ունեցել քանակական ու որակական մեծ տեղաշարժեր։ Դա իր հերթին հիմք է ծառայել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի ակտիվ մասի ինտենսիվ որակական նորացման համար։ Աղյուսակ № 1-ում բերված տվյալները վկայում

Աղյուսակ № 1

ՀՍՍՀ մեքենաշինության և մետաղամշակության արտադրանքի ընդհանուր ծավալի աճի տեմպերը արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ (1970—1979 թթ., տոկոսներով՝ 1970 թ. համեմատությամբ)[6]

Ըստ տարիների	1970	1975	1976	1977	1978	1979
արդյունաբերություն ընդամենը	100	145	157	169	182	196
այդ թվում մեքենաշինություն և մետաղամշակություն	100	182,1	205,8	228,8	254,9	282,9

[6] «Народное хозяйство Арм. ССР за 60 лет», Ереван, 1980 г. с. 172, 178.

են, որ ՀՍՍՀ մեքենաշինության արտադրանքի տեսակարար կշիռն ամբողջ արդյունաբերության մեջ տարեցտարի աճում է։ Բացի այդ, ներկայումս էկոնոմիկայում առաջին պլան են մղվում մեքենաշինական արդյունաբերության երիտասարդ ճյուղերը, մասնավորապես էլեկտրոնիկան, ռադիոտեխնիկան, ատոմային տեխնիկան, ճշգրիտ սարքաշինությունը և այլն, որոնք հանրապետության արդյունաբերության մասնագիտացման մեջ հանգեցնում են խոր փոփոխությունների։ Դրանց տեսակարար կշիռը 1980 թ. մեքենաշինական արտադրանքի մեջ եղել է 80%, այն դեպքում, երբ հանրապետության համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը կազմել է 72,4%[7]։

Գիտատեխնիկական առաջադիմության աղդեցությամբ ստեղծվում են առավել կատարելագործված աշխատանքի միջոցներ, որոնց օգնությամբ կազմակերպվում է առանց արտադրական թափոնների արտադրության տեխնոլոգիա, որը հանգեցնում է նյութերի նշանակալից տնտեսմանը։ Դա ապահովում է միութենական հանրապետությունների և տնտեսական շրջանների առավել ռացիոնալ կոմպլեքսային զարգացումը և խթանում է աշխատանքի տերիտորիալ բաժանման կատարելագործմանը, որի հետ կապված՝ հասարակությունը հնարավորություն է ստանում օգտագործել յուրաքանչյուր ռեգիոնի կոնկրետ պայմաններին համապատասխան բազմազան տեխնիկա և տեխնոլոգիա։ Հետևաբար, ընդլայնվում և խորացվում են ինչպես ներճյուղային, այնպես էլ միջճյուղային մասնագիտացումը։ Որպես կանոն, այդ պրոցեսները տեղի են ունենում երկրի որոշակի տերիտորիայում։ Այսինքն, դրանց հետ միաժամանակ ընդլայնվում և խորացվում է աշխատանքի հասարակական բաժանումը։ Աշխատանքի հասարակական բաժանման ընդլայնման և խորացման բոլոր տարատեսակները, այդ թվում և տերիտորիալ բաժանման ձևը, արտահայտվում են հասարակական արտադրության մասնագիտացման տարբերակման մեջ։ Արտադրության մասնագիտացման խորացումը, այսինքն որոշակի նյութական կոնկրետ արժեքներ արտադրող արտադրությունների առանձնացումն իր հերթին գիտատեխնիկական առաջընթացի արագացման ուղիներից է։ Մասնագիտացման շնորհիվ, որպես կանոն, բարձրանում է հասարակական աշխատանքի արտադրողականությունը, էժանանում է մեքենաների և սարքավորումների արտադրությունը, կրճատվում են շենքերի և կառույցների շինարարության ծախսերը՝ կապված հավաքովի կոնստրուկցիաների օգտագործման և նախագծերում կատարվող դրական փոփոխությունների հետ։ Դա հանգեցնում է կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի մեջ ֆոնդերի ակտիվ մասի ծախսերի տեսակարար կշռի բարձրացմանը։

Աղյուսակ № 2-ի տվյալներից երևում է, որ հանրապետության մեքենաշինության մեջ կապիտալ ներդրումները տարեցտարի աճում են։ Դա պատահական երևույթ չէ։ Այսպես, 1976 և 1979 թթ. մեքենաշինության և մետաղամշակության մեջ կատարված կապիտալ ներդրումների տեսակարար կշիռները ամբողջ արդյունաբերության մեջ համապատասխանաբար կազմել են 23,9 և 32,4%, այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում այդ ճյուղի արտ-

---

7 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1980, № 11, էջ 8։

տադրանքի տեսակարար կշիռն արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ համապատասխանաբար կազմել է 24,5 և 27%[8]։

Աղյուսակ № 2

ՀՍՍՀ արդյունաբերության, այդ թվում՝ մեքենաշինության և մետաղամշակության մեջ կապիտալ ներդրումների ծավալը (համադրելի գներով՝ մլն ռուբլի)[9]

Ըստ հնգամյակների	8-րդ հնգամյակ	9-րդ հնգամյակ	1976	1977	1978	1979
արդյունաբերություն ընդամենը	1204	1499	339	349	362	417
այդ թվում մեքենաշինության և մետաղամշակության մեջ	206	272	81	101	115	135

Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում տեղի է ունենում հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանման խորացման, տնտեսական շրջանների մասնագիտացման ուժեղացման և նոր մասնագիտացված ճյուղերի առաջացման ակտիվ պրոցես։ Մասնագիտացված արտադրություններն ունեն մի շարք առավելություններ. մասնավորապես մասսայական և խոշոր սերիական արտադրությունների կազմակերպումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել արտադրության միջոցները, տնտեսել աշխատաժամանակը։ Պատահական չէ, որ Կ. Մարքսը մասնագիտացումը դիտարկում էր որպես մի գործոն, որը ստեղծում է նոր հասարակական արտադրողական ուժ[10]։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ գիտատեխնիկական առաջադիմության տեմպերը հասարակական արտադրության աճի համեմատությամբ ունեն առաջանցիկ բնույթ։ Այդ են վկայում հետևյալ տվյալները. անհատական արտադրություններում սարքավորումները ծանրաբեռնվում են իրենց հզորության 5—10, սերիական արտադրություններում՝ 45—55, իսկ մասսայական արտադրություններում՝ 90—95%-ի չափով[11]։

Փորձը ցույց է տալիս, որ ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում մասնագիտացման առավել արդյունավետ ձևերն են դետալային և տեխնոլոգիական մասնագիտացումը։ Դրանք ստեղծում են բարենպաստ պայմաններ՝ միատիպ արտադրանքի արտադրության համակենտրոնացման համար։ Մանր արտադրությունների վերացման հետևանքով արտադրական կարողությունների մի մասն ազատվում է և հասարակությունը հնարավորություն է ստանում դրանք առավել արդյունավետ օգտագործել ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում։Այսպիսով, կրճատվում են ինչպես կապիտալ ներդրումների ծավալը, այնպես էլ առարկայացված և կենդանի աշխատանքային ծախսումները։ Նման տիպի արտադրությունները մեծ ծախսեր չեն պահանջում։ Դրանք հնարավորություն են տալիս միավոր կարողությունների գծով իջեցնել կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը շինա-

---

8 «Народное хозяйство Арм. ССР за 60 лет», с. 80.

9 Նույն տեղում, էջ 173։

10 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 384։

11 А. А. Аракелян, Научно-технический прогресс в СССР, Ереван, 1978, с. 72.

բարական հրապարակների յուրացման ծախսերի կրճատման (այդպիսի արտադրությունները կարելի է տեղաբաշխել բնակեցված շրջաններին մոտ) և ոչ արտադրական ինֆրակառուցվածքի օբյեկտների կառուցման հաշվին, որոնք կապված են ջեռուցման, էլեկտրաէներգիայի և ջրի հարաբերականորեն ոչ շատ սպառման հետ։

Նշված պրոբլեմի լուծման նպատակն է ապահովել հասարակական արտադրության և կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության հետագա բարձրացում։ Որպես կանոն, այդպիսի արտադրությունների տեխնիկական մակարդակը բավական բարձր է։

Գիտատեխնիկական առաջընթացի ազդեցության տակ մի շարք բնական հումքատեսակներ «գուրս» են մղվել իրենց օգտագործման ավանդական բնագավառներից (օրինակ, մասամբ անտառանյութը՝ շինարարությունից, մի շարք մետաղներ՝ մեքենաշինությունից և այլն)։ Այս բոլոր պրոցեսները հանգեցնում են նյութական արտադրության կառուցվածքի փոփոխմանը՝ արտադրության «վերին հարկերի» տեսակարար կշռի բարձրացման հաշվին։ Հայտնի է, որ ինչքան բարձր լինի վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը շրջանի արտադրության մեջ, այնքան, այլ հավասար պայմաններում, բարձր կլինի հասարակական ամբողջական արդյունքի ծավալը և, հետևաբար՝ շրջանի տեսակարար կշիռը հասարակական արտադրության մեջ։

Արտադրության իրային գործոնի զարգացման մակարդակն անմիջական ազդեցություն է գործում աշխատանքի հասարակական բաժանման բովանդակության վրա։ Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում կատարելագործվում են արտադրության միջոցները. տեխնիկան զարգանում է բարձր և արագացված տեմպերով, երևան են գալիս նոր ճյուղեր և ենթաճյուղեր, որոնք արտադրում են առավել ժամանակակից մեքենաներ ու սարքավորումներ։ Այս բոլորի հետևանքով փոփոխվում են աշխատանքի առարկաների մշակման եղանակները և, հետևաբար, որակական տեղաշարժեր են կատարվում բուն աշխատանքի բաժանման մեջ։ Կ. Մարքսի դիպուկ արտահայտությամբ «Մեքենաների, քիմիական պրոցեսների ու այլ մեթոդների միջոցով նա (տեխնիկական հեղափոխությունը—Մ. Բ.) արտադրության տեխնիկական բազիսի, իսկ դրա հետ միասին նաև բանվորների ֆունկցիաների ու աշխատանքի պրոցեսի հասարակական կոմբինացիաների մեջ շարունակ հեղաշրջումներ է առաջ բերում։ Այսպիսով, նա նույնքան անընդհատ ռևոլյուցիոնացնում է աշխատանքի բաժանումը հասարակության ներսում և կապիտալի մասսաներն ու բանվորների մասսաներն անընդհատ նետում է արտադրության մեկ ճյուղից մյուսը»[12]։ Հետաքրքիր է, որ գիտատեխնիկական առաջընթացը լայն հնարավորություններ է ստեղծում աշխատանքի ինտեգրացման համար։

Ինչպես նշվեց վերևում, գիտատեխնիկական առաջընթացը հանգեցնում է հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանման խորացմանը, որը բարդացնում է տնտեսական շրջանների կապերը։ Հասարակության արտադրողական ուժերի զարգացումը, ինչպես նաև տնտեսական շրջանների մասնագիտացումը հանգեցնում են արտադրական կապերի ընդլայնմանը։ Դրանք

12 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 510—511։

աշխատանքի տերիտորիալ բաժանման նյութական կրողներն են, իսկ աշխատանքի տերիտորիալ բաժանումը, իր հերթին, որոշում է տնտեսական կապերի հաստատության աստիճանը։ Ամբողջ երկրի մասշտաբով միասնական ժողովրդատնտեսական համալիրի ստեղծումը և պլանաչափ զարգացումը հասարակական արտադրության տերիտորիալ կազմակերպման ու արտադրողական ուժերի տեղաբաշխման հիմքն են և որոշում են ՍՍՀՄ տնտեսական շրջանների զարգացման ուղղությունները։

Ժողովրդական տնտեսության արդյունավետության մակարդակը նշանակալից չափով որոշվում է ըստ ռեգիոնների արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխմամբ և դրանց միջև արտադրական կապերի կատարելագործմամբ։ Գիտատեխնիկական առաջընթացը վճռող ազդեցություն է գործում արտադրողական ուժերի տեղաբաշխման և աշխատանքի տերիտորիալ բաժանման ողջ համակարգի վրա։ Բացի այդ, դրա ներգործության հետևանքով թուլանում է բնակլիմայական պայմանների ազդեցությունն արտադրության տեղաբաշխման վրա՝ կապված ժամանակակից արտադրամիջոցների օգտագործման հետ։ Իր հերթին, այդ պայմանները հակադարձ ազդեցություն են գործում արտադրության միջոցների արտադրության վրա։ Դրանց ստեղծումը նախօրոք կապվում է տնտեսական շրջանների առանձնահատկությունների հետ։ Հետևաբար, աշխատանքի տերիտորիալ բաժանումն իր հերթին հանդես է գալիս որպես գիտատեխնիկական առաջընթացի զարգացման գործոն։ Հատկապես մեծ է այդ գործոնի դերը ՀՍՍՀ-ի համար, որի էկոնոմիկան ՍՍՀՄ միասնական ժողովրդատնտեսական համալիրի ինտեգրացված օրգանական մասն է։ Այսպես, Սովետական Հայաստանի էկոնոմիկայի զարգացմանը սկզբնական շրջանում նպաստել է Սևան—Հրազդան կասկադի շինարարությունը։ Սակայն բուռն զարգացող արդյունաբերության վերելքին խոչընդոտում էր ՀՍՍՀ սեփական վառելիքաէներգետիկական բազայի բացակայությունը։ Ջրային սակավ ռեսուրսներ ունեցող մեր հանրապետության արդյունաբերության հետագա զարգացումը հնարավոր դարձավ միայն շնորհիվ երկրի տարբեր շրջաններից ստացվող նավթի և գազի հիման վրա ջերմաէլեկտրակայանների և ատոմային էլեկտրակայանի կառուցմամբ, որը հնարավորություն է տվել արտադրել ավելի շատ էլեկտրաէներգիա, քան նախատեսված էր ԳՕԷԼՌՕ-ի պլանով ամբողջ երկրի համար[13]։ Դրանով իսկ Սովետական Հայաստանում լուծվեց էներգետիկական պրոբլեմը։

Այսպիսով, գիտության ու տեխնիկայի բուռն զարգացման պայմաններում աշխատանքի առարկաները նպաստում են ամբողջ երկրի մասշտաբով հասարակական արտադրության ռացիոնալ տեղաբաշխմանը։ Վերջինիս հետևանքով լայն հնարավորություններ են բացվում առանձին շրջանների արտադրական մասնագիտացման և միջռեգիոնալ կապերի կատարելագործման համար։

Մարքսիստական քաղաքատնտեսության կատեգորիաներից են արտադրության մասնագիտացումն ու համակենտրոնացումը, որոնք արտահայտում են անմիջապես նյութական արտադրության ոլորտում ծագած արտադրական

---

[13] А. А. Аракелян, Экономическое сотрудничество народов СССР, Ереван., 1977, с. 28.

հարաբերություններ և առավել լրիվ են բացահայտում դրանց ազդեցությունը արտադրության տեխնիկական բազիսի վրա։

Մասնագիտացումը, որը աշխատանքի հասարակական բաժանման կոնկրետ ձևերից է հասարակական արտադրության տարբեր աստիճաններում, նպաստում է դրա զարգացմանը և հետագա կատարելագործմանը։ Կ. Մարքսն ընդգծել է, որ «Արտադրության հասարակական ճյուղերի բաժանման հետևանքով ապրանքներն ավելի լավ են պատրաստվում, մարդկանց տարբեր հակումներն ու տաղանդները հնարավորություն են ստանում իրենց համար գործունեության համապատասխան ոլորտ ընտրելու...։ Այսպիսով, թե՛ արդյունքը և թե՛ նրա արտադրողը կատարելագործվում են աշխատանքի բաժանման միջոցով»[14]։ Եթե մասնագիտացման զարգացումը պայմանավորված է մշտապես երևան եկող նոր աշխատանքի գործիքներով, ապա, արտադրողական ուժերի զարգացումը, իր հերթին, ոչ քիչ չափով է կախված արտադրության մասնագիտացման մակարդակից։ Արտադրության տերիտորիալ մասնագիտացման զարգացմանը նպաստում է մասսայական արտադրությունը։ Այս դեպքում լայն պայմաններ են ստեղծվում առավել կատարելագործված արտադրական մեքենաների օգտագործման համար, որոնք նախատեսված են ինչպես տվյալ ռեգիոնի, այնպես էլ երկրի ժողովրդատնտեսական պահանջների բավարարման համար։

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի այն կարծիքը, որ գիտատեխնիկական առաջընթացը համահարթեցնում է էկոնոմիկան՝ տնտեսական շրջանների կտրվածքով[15]։ Մեր կարծիքով դա այնքան էլ ճիշտ չէ։ Բանն այն է, որ գիտատեխնիկական առաջընթացն ուժեղացնում է տնտեսության շրջանային տարբերակումը, որովհետև տեխնիկայի զարգացման միտումն այնպիսին է, որ արտադրության գործիքներն ու տեխնոլոգիան ավելի ու ավելի են հարմարեցվում տեղական պայմաններին։ Դրա նպատակն այն է, որպեսզի հասարակության համար առավել չափով օգտագործվեն շրջանի նպաստավոր պայմանները։ Այսպիսով, այն հետևությունը, թե գիտատեխնիկական առաջընթացը համահարթում է տնտեսական շրջանների էկոնոմիկան, կարող է բացասաբար աղդել ժողովրդական տնտեսության տերիտորիալ պլանավորման վրա, որովհետև առիթ է տալիս արտադրության տեղաբաշխման ժամանակ անտեսելու առանձին շրջանների յուրահատկությունները։ Արտադրության տեղաբաշխումը և աշխատանքի տերիտորիալ բաժանումը չեն կարող զարգանալ առանց ժամանակակից էներգիայի աղբյուրների և ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացման բարձր մակարդակի։ Արտադրության կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման միջոցները կարող են ներդրվել միայն էլեկտրականության հիման վրա, որը հեղափոխականացնող ազդեցություն է գործում նյութական ամբողջ արտադրության և դրա ճյուղերի վրա։ Ժամանակակից պայմաններում նյութական արտադրության զարգացման մակարդակը հնարավորություն է տալիս արտադրության

---

[14] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 385—386։

[15] А. Д. Данилов, Экономическое районирование СССР («Экономические районы в СССР», М., 1969, с. 9), Н. И. Шраг, Промышленные комплексы, М., 1969, с. 22; М. Г. Исаева, В. И. Жихарева, Экономика СССР—единый народнохозяйственный комплекс, Алма-Ата, 1975, с. 17 и др.

բոլոր պրոցեսներում օգտագործել անհամեմատ ավելի շատ էլեկտրաէներգիա, քան էներգիայի մնացած տեսակները։ Էներգետիկայի զարգացման մակարդակը կախված է արտադրողական ուժերի զարգացումից։ Ներկայումս երկրի էներգետիկայի զարգացման համար կարևոր նշանակություն ունի ատոմային էներգիան։ Ատոմի օգնությամբ հնարավոր է դարձել էներգիա ստանալ երկրի այն շրջաններում, որոնք չունեն վառելիքի անհրաժեշտ բազա կամ էլ դժվարամատչելի պայմաններում են գտնվում։ Իսկ դա հանգեցնում է այն բանին, որ արդյունաբերական արտադրության զարգացումն ազատվում է տեղական վառելիքաէներգետիկական կախվածությունից։ Դրա կարևոր արտահայտությունն է երկաթուղիների էլեկտրիֆիկացումը, մեծ տարածությունների վրա էներգիայի հաղորդումը և այլն։

Ինչպես նշվեց, հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանումը բնութագրվում է տնտեսական փոխկապակցված շրջանների համակարգով։ Իր մասնագիտացված ճյուղերով հասարակական արտադրությանը շրջանի մասնակցությունը դրսևորվում է միջշրջանային կապերի միջոցով, որոնք իրականացվում են տրանսպորտի օգնությամբ։ Լ. Ի. Բրեժնևը նշել է, որ «տրանսպորտը... միշտ կարևոր դեր է խաղացել, իսկ այժմ, այն պայմաններում, երբ արդյունաբերությունը աննախընթաց կերպով շարժվում է դեպի Սիբիր և Հեռավոր արևելք, երբ խորանում են մասնագիտացումն ու կոոպերացումը, նրա նշանակությունը էլ ավելի է մեծանում»[16]։ Զափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ աշխատանքի տերիտորիալ բաժանման զարգացումը պայմանավորված է եղել ժողովրդական տնտեսության այդ ճյուղի արագ վերելքով։ Դեռևս ժամանակին Կ. Մարքսը գրել է, որ արտադրավայրերի ու շուկայավայրերի հարաբերական տեղադրության հետևանքով փոփոխություններ են տեղի ունենում՝ պայմանավորված տրանսպորտի և կապի միջոցների փոփոխություններով[17]։ Տրանսպորտը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերը մեկ միասնական օրգանիզմի մեջ կապակցող օղակ է ու անմիջական ազդեցություն է գործում արտադրության զարգացման և տեղաբաշխման վրա։

Գիտատեխնիկական առաջընթացի զարգացման պրոցեսը մեծացնում է արտադրության տեղաբաշխման հնարավորությունները և միաժամանակ էժանացնում է տրանսպորտը։ Տեղական շուկաների աճը կրճատում է տրանսպորտային ծախքերի տարբերակումը։ Շուկայի ազդեցությունն ընդհանուր առմամբ մեծանում է՝ կապված մի շարք ճյուղերում հումքի ու նյութերի ծախսերի կրճատման հետ։ Չէ՞ որ ժամանակակից մի շարք տեխնոլոգիական պրոցեսներ բնութագրվում են միավոր արտադրանքի պատրաստման վրա հումքի և նյութերի ծախսերի իջեցման միտումով։

Տրանսպորտի բոլոր տեսակների զարգացումը երկակիորեն է ազդում արտադրության տերիտորիալ մասնագիտացման վրա։ Մի կողմից այն նպաստում է արտադրողական ուժերի տեղաբաշխման ոլորտի ընդլայնմանը, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն է ստեղծում խոշոր արդյունաբերական կենտրոններն անհրաժեշտ քանակով ապահովելու ոչ միայն տեղական հումքով, այլ նաև տրանսպորտային ոչ շատ ծախսեր պահանջող բերովի հումքատե-

---

16 Լ. Ի. Բրեժնև, Ելույթ ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1979 թ.) պլենումում։ ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1979 թ.) պլենումի որոշումը, Երևան, 1980, էջ 9։

17 Կ. Մարքս, Կապիտալ, հ. II, Երևան, 1936, էջ 220—221։

սակներով։ Այսպես, խողովակային տրանսպորտը հնարավորություն է տալիս բնական ռեսուրսները հասցնել դրա կարիքը զգացող այլ տնտեսական շրջաններ։ Խողովակային տրանսպորտը տնտեսական շրջանների մասնագիտացումը կատարելագործելու ժամանակ թուլացնում է հումքային գործոնի ազդեցությունը։ Բացի այդ, տրանսպորտի մնացած տեսակների հետ համեմատած այն ունի շահագործման բարձր ցուցանիշներ. այսինքն, խողովակային տրանսպորտը շատ արդյունավետ է և ներկայումս նրա դերը մեծ է արտադրության տեղաբաշխման վրա։ Ժողովրդատնտեսական համալիրի զարգացումը հանգեցնում է ներշրջանային կապերի մեծացմանը։ Դրա համար էլ աշխատանքի տերիտորիալ բաժանումը և տնտեսական շրջանների համալիր զարգացումն անմիջապես կապված և նշանակալից չափով պայմանավորված են տրանսպորտային համակարգի զարգացման մակարդակով։

Ծովետական Հայաստանում հիմնական փոխադրամիջոցներն են երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտը։ Ավելին, երկաթուղային տրանսպորտով բեռների ներհանրապետական փոխադրումները գերազանցել են հանրապետության փոխադրումների աճի տեմպերը։ Եթե վերջին 8 տարում ընդհանուր փոխադրումները ավելացել են 25,5%-ով, ապա հանրապետության ներսում այն կազմել է 71%[18]։ Դա բացատրվում է նրանով, որ հանրապետությունում նշված ժամանակաշրջանում բարձր տեմպերով է զարգացել աշխատանքի տերիտորիալ բաժանումը, որի հետևանքով էլ արտադրության տեղաբաշխումն ու համակենտրոնացումը տեղի է ունեցել հեռավոր շրջաններում։ Ընդ որում, փոխադրվող բեռների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն շինանյութերը, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, սննդարդյունաբերության արտադրանքները։

Տրանսպորտային գործոնը տարբեր ձևով է ազդում ռեգիոնների մասնագիտացման և դրանց ժողովրդատնտեսական կոմպլեքսի ձևավորման վրա։ Եթե շրջանների մասնագիտացումը նպաստում է մագիստրալային տրանսպորտի զարգացմանը, ապա շրջանի ժողովրդատնտեսական կոմպլեքսը հավասար չափով կախված է ինչպես մագիստրալային, այնպես էլ տեղական նշանակության տրանսպորտի զարգացումից։ Նպաստավոր տրանսպորտային դիրքը օգնում է շրջանի մասնագիտացման խորացմանը, որովհետև այն հնարավորություն է տալիս շրջանի բնական ռեսուրսները ժողովրդատնտեսական շրջանառության մեջ ընդգրկել։ Մասնավորապես, երկրի արևելյան շրջանների թույլ մասնագիտացումը կարելի է բացատրել ինչպես մագիստրալային, այնպես էլ տեղական նշանակության տրանսպորտի բացակայությամբ։

Այսպիսով, ցանկացած տերիտորիալ-արտադրական կոմպլեքսի զարգացումն անհնար է առանց տրանսպորտի։ Կ. Մարքսի բնութագրմամբ տրանսպորտը հանդիսանում է «արտադրապրոցեսի հարատևում շրջանառության պրոցեսի միջում ու շրջանառության պրոցեսի համար»[19]։ Տրանսպորտը միմյանց հետ միացնելով ձեռնարկությունները, ճյուղերը, տնտեսական շրջանները, այսինքն՝ արտադրությունն ու շրջանառությունը, ըստ էության ավարտին է հասցնում նյութական արտադրության պրոցեսը։ Հասարակական

---

18 «Հայաստանի ծողովրդական տնտեսություն», 1981, № 3, էջ 65։

19 Կ. Մարքս, Կապիտալ, հ. II, էջ 121։

վերարտադրության տերիտորիալ ասպեկտը հանգեցնում է ոչ միայն տրանսպորտի պրոբլեմին, այլ նաև ընդգրկում է տերիտորիալ գործոնների ամբողջությունը, որն էլ նպաստում է հասարակական արտադրության արդյունավետության բարձրացմանը։ Իսկ գիտատեխնիկական առաջընթացի արդյունավետությունն անհրաժեշտ է ամենից առաջ քննարկել ոչ թե որպես տեխնիկական, այլ՝ հասարակական երևույթ։

ВЛИЯНИЕ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОГО ПРОГРЕССА НА УГЛУБЛЕНИЕ ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗДЕЛЕНИЯ ТРУДА

МИКАЕЛ ТАВАДЯН

Резюме

В условиях развитого социализма создаются широкие возможности для всё более действенной взаимосмязи достижений научно-технического прогресса с преимуществами социалистической системы хозяйства. Осуществление этой цели социалистической экономики на основе научно-технического прогресса зависит от постоянного совершенствования структуры общественного производства, от разделения общественного труда. Наиболее совершенные средства труда обеспечивают комплексное развитие союзных республик и экономических районов и тем самым способствуют совершенствованию территориального разделения труда, т. е. общество получает возможность использовать разнообразие техники и технологии применительно к конкретным условиям каждого региона. Углубляющееся территориальное разделение труда усложняет хозяйственные связи между экономическими районами, которые в свою очередь являются материальными носителями территориального разделения труда.

Научно-технический прогресс оказывает решающее влияние на размещение производительных сил и на всю систему территориального разделения труда.